



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8986

891.99
t-58

■ 2003

ՀԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

ԱՐ

ՄՈՆՅԱ ՆԵՐՆԴԻՔԵՔԸ

ԿԵՄ

100
818
9

ՄՈՅԻՔՈՒԼԻ ՎՐԵԺԸ

Պօղըվիլ մէկ զործողութեամբ



ԹՐԻՖԻՄ

Տպ. Կ. Թաւարթչիլաձէի, Կապ. Ա. Մահմետ Յակոբեան

Սերդէսկայա փող. № 1.

1904

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

891-399

ԱՇԽԱՏԻՔՔ

ՄՈՑԻՔՈՒԼԻ ՎՐԵԺԸ

Վօղլվիլ մէկ զործողութեամբ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայոց պատման

Дозволено цензурою 18 Мая 1904 г. Тифлисъ.

2232

Եռէր

ԳԱՍՊԱՐ ՏԵՐ-ՑՈՎՃԱՆՆԻՍԵԱՆՑԻՆ

Ի հեան ընկերական զերմ
սիրոյ եւ անկեղծ յարգանաց:

ՀԵՂԻՆԱԿԻՑ

ԳՈՐԾՈՂ ԱՆՉԻՆՔ

ՕՐԵՓ.—40 տարեկան, լայն շալվար, արխալուղ, գօտի.
սապօգներ:
ՓԵՓԵԼ.—արա կինը—զլուխ կապած:
ՍՈՒՅ.—սրանց աղջիկը—զլուխը եւրոպական ձևով:
ՕՍԱՆ.—խնամախոս-պառաւ, սև շորեր. զլուխը փաթա-
թած կամ կապած:
ԳԻԳՈԼԻ.—Օսէփի ծառան, ցանցառ մօրուքով:
ՓԵՇՏՄԱԼ. ՃԵԱՆ.—պիտմակ, գլխին ֆէս, քիթը երկար և
մեծ. մօրուք, միջին տարիքով:
ԶՈՒԹՆԱՋԻՆԵԲ.—Մենեակը.—Տախտ, սեղան, աթոռն ր,
և այլն—ասիական ճաշակով:

Настоящая пьеса подъ заглавием „Месть свахи“
разрѣшена г. Главноначальствующимъ для представ-
ленія на сценахъ края.

Ноября 8 дня 1903 г. гор. Тифлисъ.

ՏԵՍԻԼ. I

(Վարագոյը բացում է. Սօնան կանգնած է
հայելու առաջ, ուղղում է մազերը և երգում «Ա՛յս
իմ սիրեկան» երգը):

ՍՕՆԱ.—Ա՛յս, էս ուր մնաց դէղէս, ինչի՞ ուշացաւ.
գար մի մանէթ մայինց առել էր, որ գնամ թազա վէկը
առնեմ. շաբաթ օրը Սուրբ Կարապետօքա է, ուրիշ աղջ-
կերք իսանց ուզած բաներն առել են, ջէր ես կի վուն-
չինչ չիմ առի (պատզա): Քա, էն անիծած Օսանը վուր-
դանց լիս նընդաւ. մեր պատւուոր քաղքցոց թողել է ու
մի ինչ որ կու է զթել, հա, հա, հա, եարաբ գիտենամ
ով է, ինչ սիրաթ ունէ: Օսանն ասում է, որ միթամ
շատ սիրուն, խելօք ու հարուստ տղայ է: Համա դէղէս
ուփրո լաւ տղայ է ճարել. ով կուլի էն սիրուն Եկրեօծի
հատը. ջէհէլ, սիրուն, ջնունինկ, ապելատները ուսին պլ-
պլում ին: Օ՛հ, գուշկա է, գուշկա, շաբաթ օրը օբումը
կուլի: (Երգում է):

ՏԵՍԻԼ. II.

ՓԵՓԵԼ. (Շտապով ներս վազելով). Սօնա, Սօնա,
էստի իս, ջալդ, ջալդ, հօրէն Սերեօժէն անց է կենում
երգէն մունդոփկը հաղած:

ՍՈՆԱ. — (Ուրախ) Դրուստ, ուր է, ուր է, մի տեսնեմ: (Եթիսան էլ վազրու են պատուհանի մօտ եւ դուրս նայում): Հա, գէղի ջան, ինչ սաղ է գալի երգէն մունդիրը, ինչ պլազրում ին ապէլատները: Ինձ անպատճառ արան կուտաս, չէ, գէղի ջան (Համբուրումէ ծեռը):

Փէֆէլ. — Հա, վուրթի, հա, արխէին կաց:

ՍՈՆԱ. — Իէղի ջան, եփ կու դրկիս մօցիքուլին:

Փէֆէլ. — Քա, չէր մէ մուլափ տռէ. էտէնց մէրաշ խօմ չի ըլի: Չիս տենում, որ էն քօփակ Օսանը բանը խորաք է անում, մամիդ խելքիցը հանում է:

ՍՈՆԱ. — Իէղի ջան, դուս արա Օսանին, մամիս էլ խելք հասկացրու: Թէ չէ յիս կոօ չիմ առնի, այ, հիմեկուանից ասում իմ, թէ ինձ Սերեօժին կուտաք, կուտանիմ, թէ չէ ես կուխեղուում:

Փէֆէլ. — Վայ քոռանամ ես, էտ ինչ իս ասում, գուլի ես, ինչէ. խեղդուել կի չէ....

ՍՈՆԱ. — Բաս հաստատ Սերեօժին կուտամս ինձ:

Փէֆէլ. — Հա, վուրթի, օչով չի կարա դաշլա անի էտ բանը. Օսանը կի չէ, որ հազար մօցիկուլ գան, ինձ խելքէս չեն կարա հանի. դու արխէին կաց, Սերեօժէն է քու փեսացուն:

ՍՈՆԱ. — Մագրամ, գէղի ջան, ես որ ոսեվար չիմ զիդի, ախըր չինովնիկի կնիկը պիտի գիդենայ ոսեվար, թէ չէ ամօթ է:

Փէֆէլ. — Ի՞նչ, ինչ ես գարդ անում, ոսեվարը էնքան գժար չէ. օրէս գէնը յիս ու դուն էտի ոսեվար կուխօսինք ու կուտովիրինք:

ՍՈՆԱ. — Հա, գէղի ջան, լաւ իս ասում, խօսանք, ու սոլիինք. թէ չէ համ ուսում չունիմ, համ էլ ոսեվար

չը գիտենամ, չի ըլի: Զինովինիկի կնիկը մայինց ոսեվար պիտի գիտենայ:

Փէֆէլ. — Յիս էլ պիտիմ գիտենայ ոսեվար, չունքի չինովնիկի գոքանչ պիտիմ ըլի. փեսիս նընդերնիրը, բարեկամնիրը զիփունանքն կու գիտենան ոսեվար, մենք էլ նրանց մօտ սեերես չենք մնայ:

ՍՈՆԱ. — Մամաշ ջան, դայ մնէ աղին մանէթ վէէր կուպիտ թամամշովի քարվանսարայ:

Փէֆէլ. — Ա՛յս, ափ ժուկի դէփօչկա:

ՍՈՆԱ. — Իայ, դայ, մամաշ ջան. Սուրբ Կարասպետօք պլիդեօտ, դա մօյ նշանդըք բուգիտ. պօսի մամիդասիթան գօստի պայտօմ. եա թագա վէէր բուգիմ դերժատ:

Փէֆէլ. — Սիշաս նէտու աղին մանէթ, Աստօձ գիդենայ, նէտու, ատէց պլիդեօտ, եա դէնդի գուզիմ:

ՍՈՆԱ. — Իա, դա, մայրիկ ջան, մաշ չիթիրի մանէթ վազմի, իշօ աղին զօնթիկ կուպիմ:

Փէֆէլ. — Տենում իս, վուրթի, էնքան էլ գժար չէ. չէր մէ հինգ նումուտումը որ էսէնց ինք խօսում, բաս որ ամեն օր խօսինք. խօմ ափիցը ու զեներալի պէս կուխօսինք:

ՏԵՍԻԼ. III.

(Սոյնք և Գիգօլի)

ԳԻԳՈԼԻ. — (Յանկարծ ներս է վազում, վարթուկը կապած, մի ծեռքին սրբիչ, միւս ծեռքին թեփշի) Ախչիկ պարոն, աղջիկ պարոն, հայեաթումը մայմուն են խաղցնում:

Փէֆէլ. — (վախենալով) Քու աչքը տրաքի հա, տո բեգալ, մէյմուն չիս բաս ինչ իս. մէ հալին թամաշ արէք, կասենաս թոկից փախած մաշխալա ըլի:

ՍՈՆԱ. —Տեսնում իք էս օյինբազին:

ԳԻԳՈԼԻ. —Ո՞վ է թոկից փախած մաշխալէն ու օյինբազը. դէ, դէ, ինչ էք փիս փիս բաներ ասում, ասկարբիթ անում ինձ. յիս էլ իմուգերօրա պատիւ ունիմ:

ՓԵՓԵԼ. —Կըիմ քու գուլին էլ, քու պատիւն էլ.

Պուրս կորի, դուրս կորի:

ՍՈՆԱ. —Էլի էծերդ մօդ ին ըլի, Գիգօլի:

ԳԻԳՈԼԻ. —Բաս որ էդպէսէ, չեմ գհայ (նստում է):

ՓԵՓԵԼ. —(Դուրս է վազում, մի փայտ ըերում ու ընկնում Դիզօլու յետից): Կուն գժմիւ ես, էլ քեզ պահել չի ըլի:

ԳԻԳՈԼԻ. —(Խուսափում է հարուսածից, այս ու այն կողմ վազվում եւ յետոյ թեփշին զցում կոտրում ու դուրս փախչում): Վայ մէ դէղի ջան, վայ մէ դէղի ջան:

ՏԵՍԻԼ. IV.

(ՓԵՓԵԼ եւ Սօնա)

ՓԵՓԵԼ. —Խօ տեսաք, խօ տեսաք սրա օյինբազութիւնը. էս նօքրի խարջ բան է, որ աս է անում: Ա՛յ Օսէփ, ինչ ասիմ, որ էսթագուր լապտածին պահում իս: Քանի ջէր ասել իմ՝ դուս արա սրան. նա կլր իրա էչն է քշում: Ի՞նչ է, էս անիծածը խարարպանութին է անում. —ո՞վ է գալի, ո՞վ է գնում, Սերեօժի հետ խօմ չինք խօսում:

ՍՅՆԱ. —Հաջաթ չէ, դէղի ջան, սիրտդ մի շուռըերի:

ՓԵՓԵԼ. —Շուռ գայ դրա սիրտը հա, դէթաղիվա, էս ինչ է. Աստծու պատիժն է: (Սօնային), Զէն առւ

Էն գետինը մտածին, գայ մօդ անէ թեփշու կտորները:

ՍՈՆԱ. —(կանչում է) Գիգօլի, Գիգօլի:

ԳԻԳՈԼԻ. —(Դուն միջից) Համմէ, ախչիկ պարոն:

ՏԵՍԻԼ. V.

(Սոյնը եւ Գիգօլի)

ԳԻԳՈԼԻ. —Զոխին խօմ չունիա բռնած, ախչիկ-պարոն. իմ արել զիտենայ, մէրաշ պլատեց ձեռքիցս ու վէր նընդաւ: Մէ շահի դուրս էկէք ջամագրիցս:

ՓԵՓԵԼ. —Էլի մասխարութին իս անում, տօ:

ՍՈՆԱ. —Տօ, գետինը մտած, ջալր արա, թէ չէ մամիս կու ասիմ էս բաները:

ԳԻԳՈԼԻ. —(Մտնում է եւ սկսում ժարըն). —Էս ահաթիս կուսրըիմ: Համա, բարիշնա ջան, խազէինիս վոնշինչ չասես:

ՍՈՆԱ. —Տօ, անպիտան, քանի ջէր իմ ասի, թէ ինձ «ջան» մի ասի, դուն ո՞վ իս, որ. (ուզում է փայտը վերցնել):

ՓԵՓԵԼ. —Արի, արի, վուրթի. դրա հետ որ նընդնենք, ջալր կուպառուինք: Համ էլ որ միամիտ է ասում, փիս մոքով խօմ չէ ասում: Պայգօմ, պայգօմ, միլի դէկօչկա, նիմնօչկի բախչումը բօլթա տալ զգէլիմ: (Դիզօլուն). Դէ, դուն էլ աւելի, պըծի. իժում սմօվրի ջուրն ածա, հազրի [զնում են]:

ՏԵՍԻԼ. VI.

(Գիգօլի մենակ)

ԳԻԳՈԼԻ. —(Ժիծարէլով) Հա, հա, հա. ինչ թամա-

շա է, եսու իմ հոգին, մէ արասի աժէ, իժում խօ էս մէ ջէրը չէ էսէնց. ամեն Ասծու օր էսէնց է. ես պրծնում եմ իմ օյինը, իժում խաղէինն է օյին սարքում ալսիկ պարոնի ու բարիչնի հիտ. նրանցը ուփրո մազար է: Ես դուան ծակիցը թամաշա եմ անում, ծիծաղում ու թիլանում: Թամամ գաղէթ գցելու օյին է սրանց բանը. ափսոս որ գաղէթչկ չեմ. թէ չէ անպատճառ գաղէթում կը գրէի ու մի էրկու շահի կը դադէի: (Ալառուզա): Էս բարիչնէն խօ տեսաք, նշնվելու է. խեղճը առաջ իրանց հարկնի «զի վրայ աչք ունէր. դէղէն իմացաւ ու խիստ հակառակից: «Յիս իմ ուզած տղին պիտիմ տայ քեզ» բզաւում էր ախչիկ պարոնս: «Չիմ ուզի, չիմ ուզի» լաց էր ըլում բարիչնէն: «Գուզիս. գուզիս. քեզ ո՞վ է հարցնողը» ասում էր ախչիկ պարոնը ու բարիչնի գլխին բամփում, կասենաս տօլմա է ծեծում: Կնքան արեց էս զալում ախչիկ պարոնս, որ բարիչնին շուռ տուեց: (Ուրախ) Տօ, մէկ էլ տեհնեմ: Էս բարիչնէն ինձ վրայ չը սիրահարուեց: Գիփ «Գիգօլի ջան, Գիգօլի ջան» էր կանչում: Ել ինչ ասել գուզէ, որ աշխրի ամենաբախտաւոր մարդը ինձ էի կարծում, մէրաշ նօքրութենից աղա պտի դառնայի: Մի օր էլ առայ տառերկու կապէկանոց քնթի աղլուխ ու տարայ բարիչնին պաղարկա, որ միթօմ նրա սրտի խոխուրդը իմանամ ու իմ սէրը յայտնեմ նրան: Երէս թրաշեցի, մազերս խուզեցի, մէքիչ պուդրա քսեցի էրէսիս ու էկայ բարիչնի մօտ: Տօ մէկ էլ որ աղլուխս չը վէկալաւ ու ոտի տակը կիսուր ամից. Զկլված մնացի: «Գժուիլ ես, գժանոց կու դրկինք, Սիրիր կու քշիլ տանք» ասեց: Իժում չօքչօք գնացի ու մեղայ էկայ, ասեցի, որ դէինօրէն միտս էր էկը ու հանաք արի: Նա էլ անջախ բաշխեց: Գրուստ են ասել մեր պապերը, թէ «Բօշադան

փաշայ օլմաղ»: Հիմի էլ ախչիկ պարոնս մի չինովնիկ է ճանկել, ուղում է բարիչնին նրան տայ. էս օրը սազ ու բազ անելիս վրայ հասայ, մատս կծեցի: Համա եփոր խաղէինին ասեմ, գուք տեսէք թամաշէն: (Դրսից լսում է ոտնածայն). Վայ մէ, ախչիկ պարոնը գալիս է, ջէր ես կի չեմ պրծել: (Շտապղով հաւաքրու է ախար եւ դորս վազում: դրանը ղնդիարվում է մըտնող Օսանի հետ ու փախչորմ):

ՏԵՍԻԼ. VII

0ԱԱ.Ն.—Վայ գետինը մտնես հա, մուրազդ փորումդ չորանայ, ոչ մինձանաս. տեսաք էս խաթէն: Լաւ է, որ զէյրէս չը պատուից: Էս լաւ է, տանեցիք էստի չին, ախմէ ջալդ գայ 0սէփը:

ՏԵՍԻԼ. VIII

(Օսան եւ Գիգօլի)
ԳիԳօլի.—(ղանդաղ մոտնելով). Գէյդա, ում ես ուզում:

0ԱԱ.Ն.—Տօ հարամզադա չիս կանա մարդագարի ժաժ գայ. էշ կերիխս, էշ մենձացի:

ԳիԳօլի.—Մեղալ քեզ Աստօձ. հիմի էլ էս քօփակը բերնի կապը կարեց:

0ԱԱ.Ն.—Ումն իս ասում քօփակ, տօ գեղացի. Հլա մի հալիդ մտիկ, կասենաս ճիերք նընզած խոզ ըլիս:

ԳիԳօլի.—Քեզ իօմ չիմ առնում, որ չես հաւնում: Գնա, գնա, զուս գնա, բան չը գողանաս:

0ԱԱ.Ն.—Եյ, մասիսարա, գողը գուն իս. ումն իս գուս անում: Գիդիս ով իմ:

Գիֆօլի. — Պօլիօվնիկի կնիկ կուլիս, բառ չէ.

080.ն. — Տեսէք, տեսէք էս անիծածին. եաբար էս թափուրին ո՞նց ին պահում, գէթաղյա:

Գիֆօլի. — Ե՞հ, ես քու գլուխը չունիմ, զնամ ախչիկ պարոնին կանչեմ:

080.ն. — Ախչիկ պարոնին մի կանչի: Յիս նրա մօտ չիմ էկի. հօրէս Օսէփը գուքայ. նաև ինձ դրկից:

Գիֆօլի. — Լաւ, չեմ կանչի. համա դէյդա ջան, չի ըլի, որ ձեր սէկրէտը ինձ ասես:

080.ն. — Կորի գլմեմէս ռադ ըլի, թէ չէ: Պատուած վէքսիլ դարձար, փիէ:

Գիֆօլի. — Լաւ, մի չարանա, ես դուս կէհամ. դուն գիգես, մուշափ տու խազէինին (զնում է դէպի դուռը եւ ծածուկ մոնում տախտի տակ): Էստեղ մի մենձ սէկրէտ կայ, բառ ինչկի չիմանամ, չի ըլի. ինձ գիտ Գիգոլի կասեն:

080.ն. — (Նստում է ծալապատիկ, զլիկի շալլ վայր առնում փոշտում է երկու անզամ): Խէր, տէր Աստօձ: Ես իմն անում իմ: Մի օյին խաղամ էս հաստափոր Օսէփի գլմին, որ իրա միկիտնի դուքնի ճամփէն մոռանայ: Հա, ջէր դուք չիք գիգի, թէ բանը ինչումն է: Այ, ձեզ կու պատմիմ, համա օչովի չասէք, թէ չէ ձիր գլմին էլ կուսաղամ էս օյինը: Քա, սրանից չորս ամիս առաջ մէ չադ մուշտարի նընգաւ ճանկս: Նարսուն հինգ տարեկան մի ախչիկ պտի սաղացրել էի մի հարուստ կուպէցի վրայ:

Գիֆօլի. — Տեսէք, տեսէք, էս քաւթառին:

080.ն. — Եդ բանի համար բարըշել էի 15 թուման: Երկու թումանը գլմանց վի կալայ ու պլանները էնէնց դցեցի, որ էնէ նշնում պրծնում էի ու 13 թումանը ջէրս

դնում: Քա, մէկ էլ, Օսէփը մուռտառ մկան պէս մէջ չը նընդաւ: Սա ճանչնում էր ախչկան: Մի տեղ սա էնէնց էր խօսել, որ տղի անգան էր հասել իմ սուտը: Էլ ինչ ասիլ գուցէ, որ բանը մօշա էլաւ, իմ 13 թումանը կորաւ: Էն օրն էվէտ ուխտ արի Մարիտոմ Աստօձանան, որ մի մենձ օյին խաղամ սրա գլմին, էնէնց օյին, որ էրագումն էլ տեսած շըլի: Զէր հրա չի էլ ամանչում, ինձ աղաչում է, որ մէ լաւ տղայ զթնեմ իր Սօնի համա, լիս էլ զթիլ իմ:

Գիֆօլի. — Նարար լինչ օյին է խաղարու իմ միամիտ խաղէինի գլմին:

080.ն. — (մանէ է զալիս). — Քա, լուրզանց որդի մէ կրօ ռաստ էլաւ, նրան համոզեցի, որ մեր քաղըումը նշնուի, պասկուի. ասի, որ յիս լաւ ախչիկ կու զթնիմ: Վուր տեսնէք նրա սիփաթը, սրտներդ կու խառնի: Մէ քինթ ունէ, մէ քինթ, ո՞նց որ կպոէ կարաս:

Գիֆօլի. — Վայ, մէ, իմ սիրտն էլ խառնում է:

080.ն. — Դունչը, ո՞նց որ մոփսիկի դունչ. աչքերը փթած ձէթիսիկի. բեխերը ո՞նց որ վակսի չօտկ, էլ, էլ ինչ ասիմ: Բաս լիզուն, ո՞նց հայեվար է խօսում. ո՞նց քրզէվար, ո՞նց թուրքեվար, մի մլթօնի լիզու: Ինըն էլ ինզիկի կօնսուի պօյէրն է: Քա էլ ուր իմ հեռու գընում. հօրէս փունց որ սրանց նօքարը. Ջէր հրա սա նրանից լաւ է:

Գիֆօլի. — Օհօ, ես լաւն եմ, բառ ինձ Սօնից լաւ ախչիկ կուտան:

080.ն. — Էն կոյին ասել եմ, որ մի սիրուն, փողով ու մուլքով ախչիկ կայ քեզ համա կուսաթքիմ: Օսէփին էլ ասի, թէ մի սիրուն տղայ իմ զթի, կօսայի-պօլէսից, հարուստ է. նոր է էկի. կօնսուի մինձ սէկլէտարն է:

Գի՞՞ ՅՈՒ. — Վոյ, դժոխքը գնաս, պառաւ. դժոխք

ՕՍԱՆ. — Հալբաթ էս Օսէփի իշտահը բաց էլաւ. յիս:

Էլ վուտո դայիմ խիեցի. յիրեք թումնի վրայ կանդնեցի՛

Էսօր ոնց որ ըլի բանը պրծնելու եմ: Մէ գայ Օսէփը::

Էս ուր մնաց, ոչացաւ, տեսնիմ, էրենւմ է (զնում է):

ՏԵՍԻԼ, IX

Գի՞՞ ՅՈՒ. — (Դուրս է զալիս տախւակի տակից):

Խօ իմացաք, այ. խալիր: Հիմի հախը չի, դիփ խարար

տամ-խաղէխնին ու աղչիկ պարոնին: Համա զիտեմ, որ

ինձ չեն աւտայ: Է՞հ, ջնանդամը, ինչ գուզէ ըլի: Փող

դաղելու աշխարք է. հալբաթ ես էլ մի էրկու շահի կը

զմ՞մ: (Դուրս է զնում):

ՏԵՍԻԼ, X

ՕՍԱՆ. — (Ներս է մտնում) Զէ, չի էրեռւմ: (Պատուա)

Հիմի Փէփէլ ինչեր է փիքը անռւմ, որ իրա Սօնին

շնովնիկի կուտայ. բաս չէ: Ինձ մօցիկուլ Օսան կօսին.

Ինձ համար ախչիկ ու տղայ պսակելը ու քանդելը վունց որ

մէ զթալ բոզբաշ խալտել: Էսքան տարումը էնէնց իմ

դուս կանդնի էս փէշակումը, որ Սաթայէլ ինձմէն մինձ

օյինբազութիւններ չի գիտենայ: Քոռը, չուախը, զիժը —

սաղ ախչիայ տեղ իմ անց կացրի. օխտը կնիկ առած պա-

ռաւ մարդին ջէնէլ, խօլսայ տղի տեղ իմ սաղցրի:

(Զայներ) Օհօ, գալիս են:



ՏԵՍԻԼ, XI

(Փէփէլ ու Սօնան մննում են թեանցով)

ՕՍԱՆ. — Եա չինովնիկի ժէնա բուդիմ, դա, մամաշա

ջան:

Փէփէլ. — Գա, դա, միլի դէվօչիա, մօյ աչքի լիս:

ՕՍԱՆ. — (առանձին) Նիմնօժկի պրաս րէժի նա

ալօյ իշտահ:

Փէփէլ. — (Նկատելով Օսանին) Օ՛հ, Օսան, էստի իս:

ՕՍԱՆ. — Բարով Փէփէլ ջան. վունց իք, վունց, մէ

արի սիրուն ախչիկ, (Սօնին) արի պաչ անիմ ճակատ, քեզ համա բախտաւ րութիւն իմ բերի:

Փէփէլ. — Զէ, Օսան, չինք ուզի էտ բախտաւորու-

թինը: Ինչի ես իմ մուրազը դաշա անռւմ. խօմ գիրիս,

որ յիս իմ ախչիկը կուօի ճանցը չիմ զցի. Էն էլ ով գիտէ,

ինչ հանդի կո՞:

ՕՍԱՆ. — Վունց, ինչ ես ասում. քա, շըլի ինձ-

մէն բէդամաղ իս: Զէր մէ իմացի, թէ ինչ հանդի տղայ

է, իժում խօսա:

Փէփէլ. — Խօմ կոօ է. պլծաւ գնայ:

ՕՍԱՆ. — Կոօ է, մաղրամ կնեսող է:

Փէփէլ. — Կոօ կնեազը ո՞րն է, քա, ինչ հանդի ես

խօսում. մախտարէն քու գլուխը զցի:

ՕՍԱՆ. — Զիմ ուզի, յիս կո՞ չիմ ուզի:

ՕՍԱՆ. — Բեզ ո՞վ է հարցնում թէ զուզիս, ան չիս ուզի:

Փէփէլ. — Ի՞նչ հանդի իս խօսում, Օսան, բաս քեզ

կուհացնիք: Գնա, թէ Աստօձ կու սիրիս, գնա էստղանց:

ՕՍԱՆ. — Է՛, դժուիլ իս, խօմ չիս ուզում: Յիս քու

գլուխը չունիմ, քիզ հէտ հէսար չունիմ. յիս գիրիմու Օսէփը:

ՍԵՆԱ. —Գնա, գնա. իմ մամին խելքից մի հանի:
ՓԵՓԵԼ. —Օսէփն ով է, նրա ինչ բանն է. յիս նրա
վրայ ուփրո մինձ իմ:

ՏԵՍԻԼ. XII

(Օսէփ ներս մտնելով)

ՕՍԷՓ. —Ի՞նչ, ինչ տո անիծած, ինձմէն մինձ ես,
քու պապի արկը գիղենայ, դիման:

ՕՍԱՆ. —Օ՛հ, Օսէփ, ինչ լաւ էկար, մէ ազատէ ինձ,
է, դէղա ու ախչիկ կինաղամ գգգրուին ինձ:

ՍԵՆԱ. —Պապա ջան, էս պառաւին դուս արա:

ՕՍԼ.Փ. —Սնուա: Գլխեմէս ուադ ըլքը էնթի օթախը,
յիս բան ունիմ Օսանի հետ, հայրա: (Փէփէլ ու Սօնա
զնում են):

ՏԵՍԻԼ. XIII

(Օսան ու Օսէփ)

ՕՍԷՓ. —Դուն սրանց անդաջ մի դնի, Օսան, կնիկար-
մատի խելքը չի հասնի էս թափուր բաներին (նայում է
շուրջը): Հա, բան բանը կու սարքիս էլլի:

ՕՍԱՆ. —Հա, Օսէփ ջան:

ԳԻԳՈՒ.Ի. —(Դուան միջից զլուխը հանելով) Ասիմ,
չասիմ, ասիմ —չասիմ, չէ, չիմ ասի: Զէր մէ սրանց մաս-
լահաթն էլ իմանամ, իժում իմ պլանները գցիմ:

ՕՍԷՓ. —Էս ով է փնթիփնթում: Տօ, մաշէննիկ, ան-
գաջ էս դնում:

ՕՍԱՆ. —Տեսէք էս օյլնբազին: (Գիգոլի փախչում
է):

ՕՍԷՓ. —Համա, Օսան, դուն ու քու հոգին, լաւ
տղայ ըլի, թէ չէ ձեռքէմչս չիս պղծնի:

ՕՍԱՆ. —(առանձին) Աբա տես վհւնց կու պղծնիմ.
(Նրան) —Վա, էտ ինչ իս ասում, Օսէփ ջան, մի էրկու
թումնի խաթեր հոգիս պիտիմ ծախի. ինձ մէկէլ մօթ-
րէսուլ մօցիքունկրէմէն չը գիղենաս, յիս պաշօտնի մօցի-
քուլ իմ. ինձ մօցիքուլ Օսան կօփին:

ՕՍԷՓ. —Ի՞նչ գիշակի է տղէն, մոռացայ:

ՕՍԱՆ. —Ասի, որ կօնսուի մինձ սէկլէտարն է (ա-
ռանձին) էն կի չէ պուճուր պօլէրն է (Օսէփին). համա
գիղիս թէ խէր կու տեսնիս, Օսէփ, էլ ինչ կուզենաս,
կօնիս. քիզմէն մինձ մարթ էլ չը ըլի քաղքումը:

ՕՍԼ.Փ. —Լաւ, լաւ (պատուա): Օսան, լոթիանա,
հէնց էսօր գնա բեր նրան, թող ծանօթանանք:

ՕՍԱՆ. —Ուփրօ լաւ, եէհամ կու բերիմ. համա —ը՝ ըը
մէ թուման տու, մնացածն իժում:

ՕՍԷՓ. —Էս սհաթիս (հանում է քսակը):

ՕՍԱՆ. —(առանձին) Բանս աջող գնաց. մէ թու-
մանն առնիմ, իժում կի յիս գիղիմ:

ՕՄ.Փ. —Համեցէք. հալալ ըլի. ջէր էս բանը գուխ ըի,
մնացածն էլ յիս գիղիմ:

ՕՍԱՆ. —(վիրջնում է փողը) Կէ, բաս էս սհա-
թիս գնում իմ. ոնց որ ըլի կու բերիմ. դուն կնկանդ
հետ խօսա, որ բանը խարաբ չանի. հազրուեցէք, գու-
քանք (առանձին) հիմի կի տեսէք խարարը:

ՕՍԷՓ. —Լաւ, լաւ (Օսանը զնում է, իսկ Օսէփը
մտնում է միւս սեննակը):

ՏԵՍԻԼ. XIV

ԳԻԳՈՒ.Ի. —(Ներս վազելով) Աշխ, թէ էս մօցի-

քուլների դադաստանը ինձ կուտան, սրանց հոգին ջէր եարասուն ջէր մազութի կարառը կը կօխեմ, իժում դըժոխքի ամենաներքի էտաժը կը ղրկեմ: Ես ինչնը են անում, համ, դէ դուք ասեցէք: Համա դրանով ինչ փող են դադում: Զէ ախալէր, իմ աշքը վախեցաւ, ես վարդապետ պատի դառնամ: (Ոտնածայներ) դալիս են. (Դուրս է վազում):

ՏԵՍԻՎ. XV.

(Ներս են մանում Օսէփ, Փէփէլ եւ Սօնան)

ՕՍԷՓ.—Այ կնիկ, ջէր մի իմացի, իժում խելքիդ դու տու, չիս իմանում, որ կօնսուի սէկլէտարն է. ամսէնը 25 թուման ջամագիր ունի, կօսէ. դամաշնի կառէտ. չիներ:

Փէփէլ.—Մաշ որ կոօ է:

ՕՍԷՓ.—Տօ կրօն ո՞րն է. ինչ իս դուս տալի. կրօ աշխարքիցն է, համա ինքը կոօ չէ. չիմի յիս որ հաւարբեցի իմ, փիս մարթ իմ, պակաս մարթ իմ: Օսանը նըրան խափիլ է, որ միթօմ փող ու մուլք իմ տալիս:

ՍՕՆԱ.—Ապէլատներ ունէ, մամա:

ՕՍԷՓ.—Հալլաթ ապէլատներ էլ կունենայ, վուրթի:

ՍՕՆԱ.—Ցիս խիստ իմ սիրում չինովնիկ:

ՕՍԷՓ.—Չինովնիկ ասիր ու պրծար, հէնց գիղիս էս մեր քաղցած չինովնիկներէն է, որ մկները ջիրումը սկաշկա ին անում:

Փէփէլ.—Էտէնց մի ասի, դիմունանք խօմ էտէնց չեն:

ՕՍԷՓ.—'Իէ, ջալդ, ինչ որ է, յիս գիղիմ. յիս իմ ախչիկը տալիս եմ էն աղին, էսա գալու է. թագա շորերը հագէք:

Փէփէլ.—(շիրթունելով) ի՞նչ, ինչ, էտէնց ձեռաց, յիս չիմ կանա կուօի զօքանչ դառնամ:

ԱՕՆԱ.—Ցիս էլ կուօի կնիկ չիմ կանա դառնայ: ՕՍԷՓ.—Սրանց մտիկ տուէք, տօ, իմ ախչիկը ում ուզիմ կուտամ. իմ ապրանքը չէ:

Փէփէլ.—Զէ, քու ապրանքը չէ. ախչիկը դէդինն է. աղէն մամինը:

ՕՍԷՓ.—Տուտնց-տուտուց մի դուս տա, թէ չէ խօմ գիղիս:

ՍՕՆԱ.—(լաց լինելով) Ախը մի ինձ էլ հարցրէք է, յիս խօմ օխչար չիմ, որ ծախում իք:

ՕՍԷՓ.—Չէնդ կարէ, թէ չէ ձեռաց վուտիս տակը կուզիմ, կատյէտ կու շինիմ: Ո՞գ է իմացի, վուր ախչիկը խօսի մամի դէմ, ան որան ուղէ, ան նրան չուզէ: Զէ, չէ, շատ խարար ըլաւ ժամանակը:

Փէփէլ.—Յիսիմ ախչիկը իմ գիտցած աղին պիտի տամ:

ՍՕՆԱ.—Ցիս իմ հաւճած տղին կու առնիմ, թէ չէ ու չիմ պասկիի:

ՕՍԷՓ.—(վեր է կենում եւ ուզում է երկուսին էլ ծեծել) Վունց թէ չիք ուզի, յիս իմ տղամարդը թէ դուք, այ թէ չիք ուզի:

ՏԵՍԻՎ. XVI

ԳԻԳՈԼԻ.—(աւելլ ծեռին ներս վազելով)..Բախի, բախի, խաղէին ջան, բախի:

ՍՕՆԱ. Են Փէփէլ.—Պուզինք, գուզինք, գուզինք:

ՕՍԷՓ.—Այ էտէնց: Ինչկի կնկտէրանց էս օրհնած մուշտին չը շանց տաս, նրանց էծերը չին փախչի: (Դիզօլուն) Տօ, դուն էլի մուռտառ մկան ալէս մէջ նընդար. դուս կրիի:

ԳԻԳՈԼԻ.—Խաղէին էկայ բարբչեցնիմ:

ՕՍԷՓ.—Գուս, հարամզադա, մինք տէրաէր չինք ուզի: (Դիզզօլին նում է):

ՏԵՍԻԼ. XVII.

(Օսէփ, Փէփէլ եւ Սօնա)

Փէփէլ.—Ասում իս, հարուստ տղայ է:

ՕՍԷՓ.—Հա, ա կնիք. չիս իմաննում. բաս յիս իմ ախչկայ դուշմանն իմ: Լաւ որ չըլի, չիմ տայ: Ախր մէ փիքր արէք, թէ ինչ բախտաւորութին կուզթնինք. օրէսդէնը կօնսուլն ու նրա մարդկքը արազն ու գէնին ինձմէն կու տասնին. իմ ու քու պատիւը կու աւելանայ էն որ յիս ու դուն մեր փեսի ու ախչկայ հետ կարէտումը ձգված անց կու կենանք իմ դուքնի առջեռվը, դիվունանք կու արմնան, բաս էտ ոչինչ:

ՍՈՆԱ.—Մամա ջան, թրիստր, օրա, Բատանսկի բաղը կուտանէ:

ՕՍԷՓ.—Մաշ, բաս նա առանց էտոնց վունց կապրի: Փէփէլ.—Մենք էլ ջալր ջալր կէհանք գուքանք:

ՕՍԷՓ.—Մաշ, բաս խօմ չինք խոռովի (Ոտնածայններ): Դէ, դէ, էկան, գնացէք հագէք. ջալր: (Փէփէլ, Սօնա վազում են միւս սենեակը. Օսէփն էլ զնում է ընդունելու հիւին):

ՏԵՍԻԼ. XVIII.

Ներս են մտնում Օսան, Օսէփ, Փէշտմալճեան եւ Դիզօլին կարզինկու:

ՕՍԷՓ.—Համեցէք, համեցէք, պարուն:

Փէշտմալճեան.—Բարի տեսութիւն, էփէնդըմ:

ՕՍԱՆ.—Համեցէք, համեցէք վուրթի, մի ամանչի, էնէնց ժաժ արի, ոնց որ ձիր տանը: (առանձին) Զը ծիծաղէք էթաղվա:

ՕՍԷՓ. — Նստի, պարուն (Աթոռ է տալիս): Գիգօլի. — (առավետօնին) Քնթին մտիկ արէք, կասենառ պամիգօրի քթոց ըլի:

ՕՍԷՓ. — (Դիզօլուն) Տօ, կարզինկով ուր էս նեքսև էկի: Գնա դախուրախս ասա, որ մէ վէդրա լաւ գինի զըրգի, կալրաս, մօթալ, կանանչի, բոխկը. ջալր, վազի:

Գիգօլի. — Էս սաթիս, խազէին (դուրս է վազում): ՕՍԷՓ. — Օսան, նստի. ինչի ես կանգնել, նստի մէ պատիկ քէփ անենք էս պարունի հետ:

ՕՍԱՆ. — Զէ, չիմ կանա Օսէփ ջան, դուք խօսացէք ձեր գործի մասին: Յիս բան ունիմ, պիտիմ զնամ:

Փէշտմալճ. — Կեցէք հոս, կաղաչեմ:

ՕՍԷՓ. — Վա, էս ոնց կուլի. նստի թէ Աստօձ կուսիրիս:

ՕՍԱՆ. — Զէ, ձեր ազիզ արէլ, չիմ կանա: Հաջաթ չէ, հալրաթ հարսնիքին լաւ քէփ կօնիմ: Հիմի մէ ախչիկ պիտիմ շանց տայ մէ տղի:

ՕՍԷՓ. — Լաւ, դուն գիլիս, Օսան:

ՕՍԱՆ. — Մնացէք բարով, գոսկիդանի (առանձին) Դէհ հիմի դուք տեսէք թրի ատրը (զնում է):

ՏԵՍԻԼ. XIX

(Փէշտմալճեան եւ Օսէփ)

ՕՍԷՓ. — Նստ ուրախ եմ, պարուն, որ լայեղ արիր իմ օջախը էկար. հալրաթ յիս էլ մարթ իմ, իմ շնորքը կու շանց տամ:

Փէշտմալճ. — Գոհ եմ վլճակէս, քանզի համեստ օրիսրդ մը տեսնելու եմ և վատան եմ, որ անիկա ապագային արժանաւոր կնիկ ըլլալու է:

ՕՍԷՓ. — (առավետօնին) Էս ինչ թունդ է խօսում, տօ, իմ արել, վուչինչ չիմ հասկանսւմ [նրան]. Էտէնց է,

գրուստ է: (առանձին) Վահ, էս ինչ մէնձ քիթ է ունեցի, տօ, մազութի բօշկա է: Էս Սօնէս խօմ կու վախենայ: ՓէՇՏԱԼ.՝ Այս ձեր սեպհական տունն ըլլալու է, անանդ չէ:

ՕՄԿ.՝ Հա, վաշի բլաղարօդնի, էս իմ սօրսալիքնի իմէնին է. էնդի բախչա էլ ունիմ. բազրումը մէ միկիտնի դուքան էլ ունիմ:

ՓէՇՏԱԼ.՝ (առանձին) Բան մը չեմ հասկընար (Նրան) Ուրախ եմ, ուրախ եմ:

ՕՄԿ.՝ Բատօնօ, մինավատ, անումդ ինչ է: ՓէՇՏԱԼ.՝ Գառնիկ:

ՕՄԿ.՝ (առանձին) Ափսոս որ ինքը էծի նման է: (Նրան) ինչ փէշակ ունիս:

ՓէՇՏԱԼ.՝ (առանձին) Ի՞նչ ըսեմ, ձեզի կը հարցնեմ: (Նրան) Բաւական արդիւնաւոր պաշտօն մը ունիմ քօնսուլին քովը և անող անմիջական համակրանքն ու սէրը կը վայելեմ:

ՕՄԿ.՝ (առանձին) Ի՞նչ է ասում, զիզ վուշինչ չիմ հասկանում: (Նրան) Հա, սէկլատիր ես, չէ:

ՓէՇՏԱԼ.՝ Այս, այս:

ՕՄԿ.՝ Պարուն, ինչ ասել գուզէ, որ օրէսպէնը ինձնէն պիտի առուտուր անեն ձեր մինձաւորները—աւրադ, գինի, րօմ, կանեակ, զուբրօվկա. դիփ գագրանիչնի ունիմ. քու խաթեր ձեկ էժան կու հէսար անիմ:

ՓէՇՏԱԼ.՝ Աղէկ, աղէկ, շատ աղէկ, ես անանկ բան մը կրնեմ, անհոգ եղէք:

ՕՄԿ.՝ Պարուն, դուն մէ քիչ նստի, գալիս իմ: Հօրէս կնիկս ու ախիկս էլ դուս գուքան: (զնում է):

ՏԵՍԻԼ. XX

(Փէշտմալնեան մինակ)

ՓէՇՏԱԼ.՝ Սղբար, աս երազ է, թէ իրականու-

թեան մէջ կը գանվիմ: Հազիւ ամիս մը կայ իմ հոս դալ, աղւու իկ աղջիկ մը պիտի առիմ կնութեան: Բայց ինչ ատարօինակ բաներ կընեն աստեղաց խնամախօսները, որք «մօցիքուլ» անունը կը կրեն: Սա իմ «մօցիքուլ» ալ ինձի քօնսուլական միծ պաշտօնեայ մը ներկարացուցած է, մինչգեռ խոհարարութիւնս ալ լաւ չեմ գիտեր: Ինչ և իցէ, սպասենք վերջաւորութիւնան. ինձի կնիկ մը պէտք է. որբան շուտ ամուսնանամ, այնքան աղէկ կըլլայ: Բայց գիտէք, թէ որբան սիրեցի սա Թիֆլիսին աղջիկները: Անոնք շատ քնիքոյ են, նազելի են, և երբ սանկտանիկ (ծնելեր) կը քալեն, խեկս գլխէս կառնուն: Աջար սա նշանածս ալ սիրուն է. (Ճօտենում է հայելուն): Ա՛խ, անիծեալ քիթ, գու ինձի պիտի խայտառակես աներանցս առաջ: Կըսեն պատեղաց բժիշկները հրաշքներ կը գործեն, անսլատնառ պէտք է քիթս պդտիկցնել տամ:

ՏԵՍԻԼ. XXI

(Գիգօլի ներս է մողնում եւ ծիծաղում)

ԳԻԳՈԼԻ.՝ (առանձին) Էստի մտիկ, լոթիանա, համեկն էլ կը պախենայ սրա սիփաթիցը. (Նրան) Պարոն, էս քանի օր է, մեր հալիկն խարար է էլի. մէջը մտիկ անողի ըինթը մէնձ է շանց տալիս:

ՓէՇՏԱԼ.՝ Այդ ինչ վիրաւորական ակնարկներ կընես, տիմար:

ԳԻԳՈԼԻ.՝ Ի՞նչ ագռաւներ:

ՓէՇՏԱԼ.՝ Աղուաւը դու ես, յիմար, դու ինձի կը ճանչնաս ով եմ: ԳԻԳՈԼԻ.՝ (առանձին) Ասիմ, թէ կօնսուլի պօվէրն ես, չէր վախաը չի (Նրան) էնէնց տի, պարոն, մի շարանա. ես քեզ չը ճանանչեցի. համեցէք, նատեցէք (արանա. ես քեզ չը ճանանչեցի. համեցէք,

թող է տալիս եւ ինքն էլ նրա մօտ նստում): Գուն
պըտի ուզես իմ խազէինի ախչկան, պարոն:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—(առանձին) Ասօր լրբութեան նայե-
ցէք, ինձի կը ծաղրէ: Բայց ինչ ընեմ, ստիպուած եմ լր-
ռել, եթէ ոչ գլխուս փորձանք մը կը բերէ: (նրան):
Դուն հոս ինչ պաշտօն ունիս:

ԳԻԳՈԼԻ.ճ.—Ե՞ս, ես (առանձին) Ի՞նչ ասեմ (նրան) ես իս խազէինի բիձու տղէն եմ:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Ուրեմն ազգականն ես ա: Օսէփին,
աղէկ, աղէկ: Այս ինչու տիկինն ու օրիսրդը չեն գուրս
ելներ:

ԳԻԳՈԼԻ.ճ.—Ոնց է վուազում, ով գիտէ սիրուը դմբ-
դմբում է: (նրան): Էս սհաթիս դուս գուքան, հէստի սի-
րուն բարիշնա է, հէստի նէժնի. ալօ առօպիան ածել զի-
տէ: (առանձին) Էն կի չէ Երազումն էլ չի տեսել ալօ-
տօպիան (նրան) էլ, էլ ինչ ասեմ, երկնքեմէն դէվէր է-
կած հրեշտակ:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Աղէկ, աղէկ, շատ ուրախ եմ:
ԳԻԳՈԼԻ.ճ.—Հարցնին ամօթ չըլի, դուն ինչ փէշակ

ունիս. աղիոկատ, դօխտուր, սապօժնիկ:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Ես ամեն բան կը հասկնամ:

ԳԻԳՈԼԻ.ճ.—Մաշ դօխտուրութին էլ կը գիտենաս:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Բաւականաշափ գիգեմ,

ԳԻԳՈԼԻ.ճ.—(Հանում է աջ ոտը եւ մօտեցնում է
նրան): Ա՞խ, պարոն դօխտուր, էս ոտիս վրայ մէ մէնձ
մազոլ կայ, մի տես:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—(զայրանում է) Խենթ ես, ինչ է,
հայլան (Դիզօլին փախչու է):

ՏԵՍԻ, XXII

(Ներս են մտնում Փէփէլ եւ Սօնա)

ՓէՓէլ.՝ Բարով պարուն (բարեւում նոյ):

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Բարկ, համեստափայլ տիկին, սիրուն
օրիսրդ, բարի ըլլայ մեր ծանօթութիւնը:

ՓէՓէլ.՝ (առանձին) Վոյ քոռահոտմ յիս, էս ինչ
մէնձ քինթ ունէ (նրան) Ո՞նց ին գործերդ:

ՍՕՆԱ.՝ (առանձին) Վայ մէ գէդի ջան. յիս պլիտիմ
սրա կնիկը գառնամ:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Ծնորհակալ եմ, տիկին, գոյ ըլլալու
ևմ Սատուճմէ, քանզի քօնսուլի քով մեծ պաշտօն ունիմ
և խոչըր ուսմիկ: (կողմ) Ճիշտ որ բաւական աղւոր ախ-
չկէ է:

ՓէՓէլ.՝ (առանձին) Քինթը հաջաթ չէ, քանի
որ փողաւոր ու մինձ մարթ է: (նրան) Հալրաթ էս էր
իմ Սօնիս ճակտի գիրը, որ քիզ պէս մի մէնձ մարթ
ռասա դար:

ՍՕՆԱ.՝ (կողմ) Մաշ չէր էս իմ ճակտի գիրը, որ
էս թալուր բայզուշին առնիմ: Ափանս իմ սիրուն Սերեօժա:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Նազելի օրիսրդ, ինչո՞ւ չէր զրցեր և
մելամաղձոտ նստած էք:

ՍՕՆԱ.՝ (թթու դէմքով) Ինչ է ասում, քրգէվար է
խօսմամ: (նրան) Զիմ իմանում, ինչ իս ասում:

ՓէՓէլ.՝ Պարուն, Սօնէս խուրը գրափար չի գիդի
չունքի գիմնալիցը դուս բերի: Զէր հայելվար խօսա:

ՓէՇՏՄԱԼ.Ճ.—Ես գրափար չեմ զրցեր, տիկին, ևս
աշխարհաբար կը զրցեմ. բայց տարաբաղդաբար մեր լե-
զուն ձերինի պէս չէ:

ՓէՓէլ.՝ (Սօնին) Ախջի ինչ իս մոռւթդ քաշ արել.
ծիծաղէ: (նրան) Հաջաթ չէ. իժում դուն մեր լեզուն
կուսովորիս, մինք քու իզուն:

ՍՕՆԱ.՝ (կողմ) Ա՞խ գետինը մտնէիր քոփակ Օ-
սան, որ էս մէյմունին էստի չը բերէիր: Վէկենամ դուս
անեմ, մամիցս վախում իմ:

ՓէջՏՄԱԼ. — Մի ամէնար, օրիսրդ, խօսէ՛:
 խօսէ՛:
 Փէֆէլ. — (Սօնին) խօսա, թէ չէ Սատոձ գիդեն ոյ ի-
 ժում թէքա թէքա կօնիմ:
 ՍՕՆԱ. — Ի՞նչ խօսամ, դուք խօսում եք ելի:
 Փէֆէլ. — Պարուն, հէր, մէր, ախալէր ունիս:
 ՓէջՏՄԱԼ. — Հէշ բանմալ չունիմ. անոնք վաղուց
 մեռած են:
 Փէֆէլ. — (կրղմ) Օխայ, ինչ իմ վանդը վեսայ իմ
 ճանկի: (Նրան) Դու սաղ ըլիս, էրդէն արե ըլիս ու քու
 կնկայ համա շատ ապրիս:
 ՍՕՆԱ. — (կրղմ) Էլնէկ էս նիմուտիս գետինը մտնի,
 պրծնիմ:
 Գիգօլի. — Ո՞նց մարթ է էդ կօնսուլը: Անիկ ունէ:
 ՓէջՏՄԱԼ. — (առանձին) Գուցէ ինքն ալ քօնսու-
 լին սիրել կը մտածէ: (Նրան) Այս, կնիկ ալ ունէ, ախ-
 չիկ ալ, մանչմ ալ:
 Փէֆէլ. — Իժում մեզ էլ կու ծանօթացնիս նրանց
 ճետ, կէհանք, դուքքանք:
 ՍՕՆԱ. — Լոտո խաղալ զիդին:
 ՓէջՏՄԱԼ. — Այս, այն, ստէպ-սոտէպ կը յաճախէք,
 լոթօ ալ կը խաղաք, քարթ ալ:
 Փէֆէլ. — Աշխր մի ասա քու անումն ինչ է:
 ՓէջՏՄԱԼ. — Գառնիկ փէշտմալնեան:
 Փէֆէլ. — Վոյ քոռանամ յիս, Փէշտմալը որն է:
 (Նրան) Լաւ անում իս ունեցի, թամամ սազում է քիդ:
 ՓէջՏՄԱԼ. — (կրղմ) Օհօ, աս կինն ալ կը ծաղը զիս:
 ՍՕՆԱ. — (կրղմ) Ե՞ն, որ հարուստ է, կու առնիմ
 սրան, ինչ կուլի կուլի. քինթը խօմ ինձ չի ուտի:
 Փէֆէլ. — Հիմի կի մէ քիշ պարզը խօսանք, բատօ-
 նօ ջան: Դուն հաւնաւմ իս իմ Սօնին: Համա զիդիս, սաղ

Թիվլիգումը իմ Սօնի հատը չը կայ. սիրնւն, խելօք, հու-
 նարնվ: Որ խմանաս նրա քաղցը ոսեվար խօսալը, կու
 գժուիս:
 ՓէջՏՄԱԼ. — (մի կողմ) Գժուելու տրամադրու-
 թիւն բնաւ չունիմ:
 Փէֆէլ. — (Սօնին) Աբա, Սօնա, ոսեվար վրա տու:
 ՍՕՆԱ. — Կակ պաժիվախ, կակ վաշի զդարօիի:
 ՓէջՏՄԱԼ. — (առանձին) Սատանան տանէ, աս
 ինչ փորձանքի մէջ ընկայ, հէշ խօսքմալ չիդեմ: (Նրան)
 Ըը, թի քըսախիվ, պօժոլուստա:
 Փէֆէլ. — Դա, դա, գասպարին Գառնիկ, մօյ դօչ օ-
 չին կրասիկի: (վեր կենալով) Վի նիմնօչկի մասլահաթ
 դելիսէ, ետ սիշաս պրիդօմ: (Սօնին) Սօնա, մի ամանչէ:
 ՏԵՍԻ, XXIII
 (Փէշտմալնեան եւ Սօնա):
 ՓէջՏՄԱԼ. — (առանձին) Վերջապէս սանկ սիրուն
 կին մը պիտի ունենամ: (Նրան) Նոնշիկս, մի ամէնար
 ինձմէն, վասնզի ես քոնն իմ, դու իմա:
 ՍՕՆԱ. — (առանձին) Աշխ, էս ինչ կրակն ընկայ,
 աէր Ասոտա:
 ՓէջՏՄԱԼ. — Որքան գեղեցիկ աչքեր ունիս, նազե-
 լիս: Յուսամ, որ աղէկ կնիկ պիտի ըլլաս, թոթոչիկս:
 ՍՕՆԱ. — Կօնսուլի մօտ չինովնիկ իս:
 ՓէջՏՄԱԼ. — Այս, հոգիս, քօնսուլին չինովնիկն եմ:
 ՍՕՆԱ. — Մաշ ուր ին ապելսաներդ:
 ՓէջՏՄԱԼ. — Պահասիրութենէ կը խորչիմ, որպէս
 խողի միան:
 ՍՕՆԱ. — Խոզի միսը սիրնւմ իս, հա. նրա խորովա-
 ծը համով է:

ՓէՇՏԱԼԱ. — (կողմ) Սա ինչ կը զրցէ, խենթէ,
ինչ է: (Նրան) Ը՞լը, այս, խոզի միաը համովէ, բայց ու-
րիշ բան խօսինք:

ՍՈՒՅ. — Կիրակի օրը քու ապէլատները սարքի, ու
արի գնանք Մուշտակիդի բազը:

ՓէՇՏԱԼԱ. — Այս, սա խենթ է. ինձի խարած են:
ՍՈՒՅ. — Դորթ, ինձքան ունիս ջամագիր:

ՓէՇՏԱԼԱ. — Ժամագիր ըլլանք կըսես: Ժամի 5-ին
աղեկ կըլայ:

ՍՈՒՅ. — Կօնսուլը դաւթբներն իս գրում:

ՓէՇՏԱԼԱ. — Հոգիս, ես ամեն ինչ կընեմ — փաս-
տարանութիւն, ատենտարանութիւն, բժշկութիւն, խոհա-
րարութիւն, թռն, ինչ ըսի, իջուս ծռեցաւ:

ՍՈՒՅ. — Դօխտուրութին էլ իս գիդեցի. լաւ է:
Գիդիս ձարս սրտի թրթոս ունէ, դօխտուրները չին
կարում սաղցնի, դուն իքնէքա սաղցնիս:

ՓէՇՏԱԼԱ. — Ատկէ դիւրին բան չի կայ. վերցու-
ցէք քիչ մը քափուստ, գլխուն վրայ ջարդեցէք, քիչմայ
աղլցէք, ը՝ ըլ, քիշմալքացախ լցէք, սրախ թրթոսը կանցնի:

ՍՈՒՅ. — Իս ուր մնաց դէղէս (վեր է կհնում):

ՓէՇՏԱԼԱ. — Ինձմէն կը վախնաս, ինչ է, նոնշիկս:

ՍՈՒՅ. — Դուն խօմ դէլ չիս, որ վախենամ:

ՓէՇՏԱԼԱ. — (կողմ) Տեսէք, ինձի գայլ ալ շինեց:
(Նրան) Գայլից ալ վախնալու չէ:

ՍՈՒՅ. — Վայ մէ մուկը, մուկը. (վեզում է
լուրս):

ՓէՇՏԱԼԱ. — Մուկը ըսաւ, ծա ես ալ կը վախնամ
աստեղաց իսոշոր մկներէն (նայում է տախտի տակը):

ՏԵՍԻ, XXVI

(Գիգօլի ասելը ծեղբին ներս է վազում)
ԳԻԳՈԼԻ. — Ու ըք է մուկը, ուր է:
ՓէՇՏԱԼԱ. — Աղբար, ասոր տակը կըլենայ, մէմ
լաւ նայէ:

ԳԻԳՈԼԻ. — Տօ եքա մարթ, չես ամանչում, որ մըկ-
նից վախում ես, էտէնց պտի կնիկ առնես:

ՓէՇՏԱԼԱ. — Ծօ, հայվան օղլու հայվան, մւմ հետ-
կը խօսիս:

ԳԻԳՈԼԻ. — Հօրէս մուկը էկաւ, էկաւ: (Աւելով զար-
կում է Փէշտմալճնանի ոտներին ու դուրս փախչում):

ՏԵՍԻ, XXV

ՓէՇՏԱԼԱ. — Ա՛խ, անիծեալ խնամախօս, ինձի
թակարդը գցած է: Թէ ձեռքս կընկնիս նէ, իշու պէս
պղիկ-պղիկ կընեմ: Զէ, ախաղար, սանկ կարգուելը չեմ
ուզեր. ես վարդապետ դառնալու եմ:

ՏԵՍԻ, XXVI

(Դրսից լավում է դրուոկի ծայն. Օսէփ «բարիբախ»
երգելով մտնում է դրուոկով)

ՓէՇՏԱԼԱ. — Ախբար, սա ինչ կընեն:
ՕՍԷՓ. — Արա, պարուն վեսացու ջան, մէ թաթարի
եախնի քէփ անինք:

ՓէՇՏԱԼԱ. — Ախ'ր, պարոն Օսէփ. սանկ բան
չըլլար:

ՕՍԷՓ. — Տօ, լաւ, թէ Աստօն կուսիրիս: Խօմ հիմի
շինք պսակում. էնէնց քէփ անինք, ինչ կայ էստումք:

Եսո՞ւր ին կորի Փէփէլն ու Սօնէն: Գիգօլի, Գիգօլի, ջալ-
դով կանչի նրանց:

ՕՍԻՓ.—Աբա ուստէք, դուք էստի նստեցէք, մէ քիչ
դնջացէք: Փեսայ ջան դուն էլ նստի, մէ սուփրէն դցինք:

ՏԵՍԻԼ. X XII

Ներս են մտնում Փէփէլ, Սօնա, Գիգօլի եւ սեղան
են սարքում ՕՍԻՓ.—(Փէշտմալճեան առանձին): Հա,
պարուն Գառնիկ, խօմտեսամբ ախչկաս, հաշնում ես թէ չէ:

ՓէՇՏՄԱԼ.՝—Աղէկ ախչիկ է. ամուսնանալս հաճոյ
է, բայց:

ՕՍԻՓ.—Ոնց թէ պաճո է, ով է պաճո (առանձին)
իրա քինթը կի գունչինչ:

ՓէՇՏՄԱԼ.՝—Այս, հաճոյ է ինձի անոր կին առնուլո:

ՕՍԻՓ.—Հա, պաճո փրանդսուզէվար լաւ բան կուլի:
(Նրանկ) Լաւ, լաւ: Հէստի պիտի բախտաւորուիս, որ էլ
էլ, ինչ ասիմ:

ԳԻԳՕԼԻ.՝—Սուփրէն հազիր է խազէին (առանձին)
հիմի տեսնենք, ինչ է դուս դալիս:

ՕՍԻՓ.—Դէ, աբա նստինք, համեցէք, պարուն, Փէ-
փէլ, Սօնա էս թէնը նստեցէք:

ՍՕՆԱ.՝—(առանձին) Թամամ պիտիմքամբաղդանայ:
Բոլորերեան նստում են): Գիգօլին կանգած է լրո-
դուկի մօտու: ՕՍԻՓ.—Աբա, քըցնենք ստաքանները: Էս
խմինք մեր պատուաւոր դօնախի կենացը: Աստօձ մու-
րազիդ հասցնէ, բախտաւոր ըլիս. Աստօձ արժանացնէ իմ
Սօնի հետ թադ ու պսակին: Տուշ, տուշ: (Դուդուկը ա-
ծում է. իմուն են): Աբա, փեսիս կենացի վրայ մէ պի-
տիմ խաղ անի: Դէ սի շալախօ ածեցէք: (պարում է,
յետոյ նստում): Աբէո Գիգօլի, էսէլ դուն խմի ու օխնի

ԳԻԳՕԼԻ.՝—Աստօձ չնաւոր անէ: Պարսւն քու կե-
նացը. ջէր մէ մաղարիչս տու:

ՕՍԻՓ.—Այ հարամզադա, վախտը գթամբ, (ինքն էլ
փող է նուիրում) Առ, էս էլ իմ կողմից:

ՓէՇՏՄԱԼ.՝—(առանձին) Աս ինչ կրակին մէջ եմ
ընկեր, ախ պառաւ խաթուն: (Տալիս է Գիգօլուն) առ:

ԳԻԳՕԼԻ.՝—Եէն կենաքը: Աստօձ իրա օրնանքը թա-
փի քու գլխին: Սաղ ըլիս: (Խմում է եւ դուրս գնում):

ՕՍԻՓ.—Փեսայ ջան մէ ջէր խաղ արա, մի ամանչի:
ՓէՇՏՄԱԼ.՝—Վալահ, ես պարել չը գիտեմ:

ՕՍԻՓ.—(քաշը է) Լաւ, նազ մի անի, խա-
ղարա, հէր օխնած ախչիկ խօմ չիս, որ ամանշում իս:

ՓէՇՏՄԱԼ.՝—Է՞ս, օր կատիվէք, ինչ ընեմ, խաղա-
րու եմ: Ագրար, չալք, չալք, սանկ ծանր պարմը չալք: (Ածում են շալախօ. Փէշտմալճեան անճոռնի կեր-
պով պարում է: Միւսները ծափահարում են):

ՕՍԻՓ.—Այ էտէնց, պրծաւ գնաց: Աբա մէ կըցրէք
ստաքանները:

ՏԵՍԻԼ. XXVIII

Չիրսից լսլում է աղմուկ. սրանք լրու ականչ են զը-
նում)՝ (Դրսում) ՈՄՆ.՝—Աղբար, հոս է էկեր:

ԳԻԳՕԼԻ.՝—Հոս, մոս, չեմ գիղի, իմանում ես:

ՈՄՆ.՝—Կըսեմ հոս է:

ԳԻԳՕԼԻ.՝—Գնառադ ըլի թէ, էմէկինծումդկըտամ որ:

ՈՄՆ.՝Աղբար, մտիր բաէ, Փէշտմալճեանին, որկը կաչեն:

ԳԻԳՕԼԻ.՝—Ճօ էստի փէշտմայ չեն ծախում. գնա
բազագիանա:

ՈՄՆ.՝—Աղբար քօնսուլին պօվէր Փէշտմալճեանը
հոս է էկեր. քօնսուլը կը կանչէ. կերակուր կայ եփելու:

ՓէՇՏՄԱԼ. — Օվէ՛ս, թակարդն ընկայ, էլ չեմ ազա-
տուիր:

ՕՍԷՓ, ՓէՓէԼ-ՍՈՒԱ. — Ի՞նչ, պօվէր:

ՓէՇՏՄԱԼ. — Ան ուղիղին կը հարցնէ. կեցէք եռ
դուրս ելնիմ, տեսնիմ (առանձին) գուցէ կռնանամ դուրս
փախչիլ, աղատիլ:

ՕՍԷՓ. — Զէ, չէ. դու նստի, յիս տեսնիմ:

ՏԵՍԻԼ, XXIX

ԳԻԳՈԼԻ. — Խաղէին, մէ նիմուտ դուրս արի, մարթ
է կանչում (առանձին) օյինը տեսէք: (Օսէփ ու Դիզօ)-
մին դուրս են զնում: Փէփէլն ու Սօնան նոյնպէս):

ՓէՇՏՄԱԼ. ՏԵԱՆ. — Աղբար, թէ հոս բան պատահի
նէ, դուք մարդասէր գտնվէք: Զէք իմանար, ջանըմ, ձեզի
հետ կը զրցեմ:

ՏԵՍԻԼ, XXX

Ներս են մտնում Օսէփ ծեղին փայտ, Դիզօլի ծեղ-
ըին աւել: ՕՍԷՓ. — Տօ դրուստ իս ասո՞ւմ, Դիզօլի:

ԳԻԳՈԼԻ. — Աստօձ գիդենայ, խաղէին, ես դիմ գիդեմ:

ՕՍԷՓ. — Աբա, ուստէք, մէ լեզվինկա ածեցէք: Պա-
րուն փեսայ, մէ լեզվինկա խաղանք մէտի: Հ՝ ը, արի,
յիս էլ հետու պիտիմ խաղամ:

ՓէՇՏՄԱԼ. — Ախր, պարն Օսէփ, ախ՛ը ը՝ ըը:

ՕՍԷՓ. — Ախր մախր չիմ գիդի, արի, քիզ ասումիմ:
(Փէշտմալնեան պարում է: Օսէփն ու Դիզօլին վրայ
են ընկնում ու ծեծելով դուրս անում): Այգեղ նշնուիլ:

ՎԱՐԱԳՈՅՑ



8986

2013

